

Սյունյաց երկիր

ՆԱԲԱԹ, 21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017Թ.
№ 34 (452)

www.syuniacyerkir.am

Եվ սխրության է նման
այս աշնան բերած
խնդությունն իսկ...

ԵՐԻՇԵ ՉԱՐԵՆՑ



«Արմաթ» ինժեներական լաբորատորիա՝ Հարժիսի միջնակարգ դպրոցում

«Երկար մտածելուց հետո հասկացանք, որ ամենամեծ ուժը, զենքը, հարստությունը, որ կարելի է ստեղծել, ամենալավ գործը, որ կարելի է անել գյուղի, հայրենիքի համար, մատաղ սերնդի դաստիարակությանը նպաստելն է: Հարկավոր է ստեղծել պոտենցիալ, որը կհամապատասխանի ժամանակակից պահանջներին, ինչը հաշվի առնելով աջակցեցի Հարժիսի դպրոցում «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի ստեղծմանը: Այսօր չտիրապետել ժամանակակից տեխնոլոգիաներին, նույնն է, ինչ տարիներ առաջ գրել-կարդալ չիմանալը, տեղեկատվական տեխնոլոգիաների վաղվա զարգացման հեռանկարները չպատկերացնելը, նույնն է, այսօր համակարգիչ չհասկանալը. դա կլինի ժամանակակից անգրագիտություն, որի դեմ պետք է պայքարել: Որոշեցինք անել մի գործ, որի շնորհիվ մեր աշակերտները, իրենց հետաքրքրությամբ, նախաձեռնությամբ ու կամավորության սկզբունքով պայմանավորված, կգան դեպի գիտելիք: Չգիտե՞մ վաղը ինչպես կլինի, բայց արդեն իսկ նկատում եմ մեծ հետաքրքրություն եւ ակնկալում՝ լավ արդյունք: Հույս ունեցե՞ք՝ մեր երկիրը նաեւ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմամբ կկարողանա դուրս գալ այն վիճակից, որում հայտնվել է խորհրդային Միության փլուզումից հետո, եւ իր ուրույն տեղը կգտնի աշխարհի երկրների շարքում», - այսպես բացատրեց Հարժիսի դպրոցում «Արմաթ» ինժեներական լաբորատորիա ունենալու նախաձեռնության նպատակը ծնունդով հարժիսցի, բարերար Ավետ Քոչյանը, ում ֆինանսական ներդրման շնորհիվ կտրվեց լաբորատորիայի կարմիր ժապավենը:

Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների ժնեկան բանակցությունները

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների նախաձեռնությամբ ժնեկի ՄԱԿ-ի գրասենյակում եւ այլ միջազգային կազմակերպություններում Շվեյցարիայի մշտական ներկայացուցչի կեցավայրում հոկտեմբերի 16-ին տեղի են ունեցել Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի ու Ադրբեջանի Հանրապետության նախագահ Իլհամ Ալիևի բանակցությունները: Հանդիպումը տեղի է ունեցել երկու երկրների արտաքին գործերի նախարարներ Եղվարդ Նալբանդյանի եւ Էլմար Մամեդյարովի, ինչպես նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովի (Ռուսաստան), Էնդրյու Շեֆերի (ԱՄՆ), Ստեֆան Վիկտորի (Ֆրանսիա) ու ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի Անջել Կասպարչիկի մասնակցությամբ:

Մեր Դավիթ Գասպարյանը

(գրականագետ, գրական քննադատ, գրականության պատմաբան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Գասպարյանը 70 տարեկան է)

Սյունյաց աշխարհից հայացք ձգելով Դավիթ Գասպարյանի կյանքին ու գործունեությանը՝ պատշաճ ենք համարում բարձրաձայնել մայրաքաղաքում հանգրվանած եւ գիտության բարձրունքներին հասած որեւէ մեկն այդքան նվիրումով, նախանձախնդությամբ ու հետևողականությամբ չի զբաղվել գրականության սպարտեզում մեր երկրամասի մեծերի կյանքի եւ գործունեության, գրական ժառանգության ուսումնասիրմամբ, վերաարժեւորմամբ ու հանրայնացմամբ, որքան նա: Ընդ որում՝ մեծերի այդ շարքը խոսում է Ակսել Բակունց, Սերո Խանդավյան, Համո Սահյան, Գուսան Աշոտ, Սուրեն Այվազյան... Այնուհետեւ՝ վերջին տասը-տասնհինգ տարում, չենք հիշում սյունիքյան որեւէ ուշագրավ միջոցառում՝ նվիրված հայ գրական կյանքին, որ ինքն ակտիվ մասնակցությամբ ու նոր խոսքով ներկա չլիներ դրան: Միևնույն ժամանակ, դժվար էր պատկերացնել «Սյունյաց երկիր» թերթի բացառիկ (հատուկ) համարների թողարկումը, եթե չլի-

ներ Դավիթ Գասպարյանի յուրահատուկ մասնակցությունը ոչ միայն հեղինակային հոդվածներով, այլև շահեկան խորհուրդներով: Իսկ նման համարների թիվը երեք տասնյակից անցնում է: Եվ, ի վերջո, Դավիթ Գասպարյանն այն մտավորականն է, ում հեղինակած հոդվածները, գրքերը, ելույթները սպասված են սյունիքյան հանրության մեջ: Դրանք մեծ մասամբ մեր ընթացքը սբափ գնահատող, մեր անցնելիք ճանապարհի ողջամտությունը կշռող-սրբագրող հրապարակումներ են: Այդ բոլորով հանդերձ ու նախեսառաջ Դավիթ Գասպարյանը գրականագետ է, գրական քննադատ, գրականության պատմաբան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Դեռ տարիներ առաջ են հայոց մեծերից շատերը գնահատել նրա ազնվությունը, սկզբունքայնությունը, պրոֆեսիոնալիզմը: Հովհաննես Շիրազը նրան անվանեց «պա-



տանի հանճար» եւ ասաց. «Դավիթի ազնվությանը ես չեմ կասկածում, մեր երկրում անհնար է արդար քննադատության ծնունդը (Դավիթը բացառություն է), արդարության խոսքը ոչ միայն վերելում է զոգվում, այլև հենց ցածում... միջակությանց սրտով է այս ամենը»:

Նախագահը ներկայացրել է ժնեւյան բանակցությունների արդյունքները

էջ 1 ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների նախաձեռնությամբ ժնեւի ՄԱԿ-ի գրասենյակում եւ այլ միջազգային կազմակերպություններում Շվեյցարիայի մշտական ներկայացուցչի կեցավայրում կայացել են Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների բանակցությունները:

Հանդիպումը տեղի է ունեցել երկու երկրների արտաքին գործերի նախարարներ Էդվարդ Նալբանդյանի եւ Էլմար Մամեդյարովի, ինչպես նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովի (Ռուսաստան), Էնդրյու Շեֆերի (ԱՄՆ), Ստեֆան Վիսկոնտիի (Ֆրանսիա) ու ԵԱՀԿ գործող նախագահի անձնակազմի ներկայացուցիչ Անջել Կասպրիչիկի մասնակցությամբ:

Հանդիպումից հետո կայացել է նախագահներ Սերժ Սարգսյանի եւ Իլհամ Ալիևի առանձնազրույցը:

Քննարկվել են Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման բանակցային գործընթացի առաջնությունը հնարավորությունները: Բանակցությունների արդյունքում նախագահները համաձայնել են միջոցներ ձեռնարկել բանակցային գործընթացն ակտիվացնելու եւ հավելյալ քայլեր կատարելու շփման գծում լարվածությունը նվազեցնելու նպատակով:

Համանախագահները գոհունակություն են հայտնել երկար ընդմիջումից հետո կայացած ուղղակի բանակցությունների առթիվ: Նրանք ընդգծել են, որ պատրաստակամ են կողմերի հետ շարունակել միջնորդական աշխատանքը Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ բանակցային կարգավորման ուղղությամբ:

Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարները եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները բանակցություններին արդյունքներով հանդես են եկել համատեղ հայտարարությամբ:

Ժնեւում՝ Շվեյցարիայի Համադաշնություն-



նում Հայաստանի Հանրապետության ղեկավարներ, նախագահ Սերժ Սարգսյանն այսօր հանդիպում է ունեցել նաեւ շվեյցարահայ մայրնքի ներկայացուցիչների հետ: Հանրապետության նախագահը հանդիպման ժամանակ իր ներածական խոսքում նաեւ ներկայացրել է Ադրբեջանի նախագահի հետ բանակցությունների արդյունքները:

«Մի քանի րոպե առաջ Ադրբեջանի նախագահի հետ հանդիպումն ավարտվեց որեւէ կոնկրետ պայմանավորվածություն, այսպես ասած, չունենք խնդրի լուծման տարբերակների մասին: Բայց պայմանավորվել ենք, որպեսզի միջոցներ ձեռնարկենք լարվածությունն էլ ավելի թուլացնելու, որպեսզի առաջնագծում չունենանք զոհեր: Պետք է ասեմ՝ Եւ Ադրբեջանի նախագահը, Եւ ես դրանում խորապես չա-

հագրողված ենք: Տա Աստված, որ միշտ այդպես կարծի: Նա էլ շատ լավ է հասկանում խնդրի բարդությունը, բնականաբար, ես էլ, բայց խնդիրն այնպիսին է, որ հեշտ լուծում երբեք չի լինելու: Սակայն մի հարցում էլ ուզում եմ, որ բոլորը վստահ լինեն՝ մեզ համար չկա լուծում, որը կարող է ինչ-որ կերպ խաթարել Ղարաբաղի անվտանգությունը: Մեզ համար միակ լուծումն այն է, որ Ղարաբաղը լինի Ադրբեջանից դուրս: Երբեք որեւէ հայ ղեկավար չի կարող ընդունել այդպիսի որոշում եւ իրականացնել, եւ դրա համար մենք ամեն ինչ անելու ենք՝ զուգահեռ զարգացնելով Հայաստանը, տնտեսապես ամրապնդելով մեր երկիրը»,- ասել է Հանրապետության նախագահը:

president.am
16 հոկտեմբերի 2017թ.

Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների համատեղ հայտարարությունը

Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը զգալիաբար անցկացրեցին այսօր Շվեյցարիայի ժնեւ քաղաքում: Արտգործնախարարներ Էդվարդ Նալբանդյանը եւ Էլմար Մամեդյարովը նույնպես մասնակցեցին հանդիպմանը, որն անցկացվեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հովանու ներքո (Իգոր Պոպով (ՌԴ), Ստեֆան Վիսկոնտի (Ֆրանսիա) եւ Էնդրյու Շոֆեր (ԱՄՆ)): ԵԱՀԿ գործող նախագահի անձնակազմի ներկայացուցիչ Անջել Կասպրիչիկը եւս մասնակցեց զգալիաբար անցկացված հանդիպմանը:

Հանդիպումն անցավ կառուցողական մթնոլորտում: Նախագահները համաձայնեցին միջոցներ ձեռնարկել բանակցային գործընթացն ակտիվացնելու ուղղությամբ եւ հավելյալ քայլեր ձեռնարկել՝ նվազեցնելու լարվածությունը շփման գծում:

Համանախագահներն իրենց գոհունակությունը հայտնեցին երկար ընդմիջումից հետո տեղի ունեցած այս ուղիղ բանակցությունների կապակցությամբ: Նրանք պատրաստակամ են մնում աշխատելու կողմերի հետ ղարաբայան հակամարտության խաղաղ բանակցային հանգույցալուծման միջնորդության ուղղությամբ: Որպես հաջորդ քայլ, մոտ ապագայում համանախագահներն աշխատանքային հանդիպումներ են կազմակերպելու ԱԳ նախարարների հետ:

Ժնեւ, Շվեյցարիա, 16 հոկտեմբերի 2017թ.
mfa.am

Գործառն ընտրադաբարի ողջամիս ուրվագիծը

Գործառն համայնքի ղեկավարի արտաքին ընտրությունը նոր փուլ է թեւակոխում:

Կիրակի օրը՝ հոկտեմբերի 15-ին, ավարտվեց համայնքի ղեկավարի թեկնածուի առաջադրումների ժամկետը, մեկ օր հետո էլ կատարվեց թեկնածուների գրանցում:

Եվ արդեն կարելի է ասել, որ նոյեմբերի 5-ին գործառն ընտրողները քվեարկություն կկատարեն համայնքի ղեկավարի պաշտոնակատար Առուշ Առուշանյանի, Գործառն նախկին քաղաքապետ Սամվել Հարությունյանի եւ Արշակ Մկրտչյանի միջեւ, եթե, իհարկե, վերջինս սահմանված 48 ժամում լրացնի անհրաժեշտ փաստաթղթերում առկա բացը:

Ավագանու ընտրություն Գործառն չի լինի, քանի որ գործող ավագանու լիազորություններն ավարտվում են 2021 թվականին:

Գործառն համայնքի ղեկավարի թեկնածուներից յուրաքանչյուրն ունի իր առավելությունները:

Առուշ Առուշանյանը պաշտոնավարման կարճ ժամանակաշրջանում ցույց տվեց, որ ի վիճակի է ղեկավարելու քաղաքային տնտեսությունը, լուծելու համայնքի բնակիչներին մտահոգող հարցերից մի քանիսը՝ աղբահանություն, մայրերի եւ զբոսայգիների մաքրության ապահովում, քաղաքային տրանսպորտի աշխատանքի կանոնակարգում:

Սամվել Հարությունյանն էլ դեռեւս Արցախյան պատերազմի դժվարին օրերին էր ապացուցել (երբ Գործառն



ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

ռազմական գործողությունների թատերաբեմ էր), որ կարող է արժանապատվորեն ղեկավարել համայնքը եւ լինել հանրապետության հեղինակավոր համայնքապետներից մեկը: Վերջին շրջանում աչքի է ընկնում մեր երկրամասի արժանապատվության, մասնավորապես վնասարար մարզպետից Սյունիքն ազատագրելու համար ծավալված ազնիվ պայքարում:

Արշակ Մկրտչյանը... Նա կարող է պատրաստակամ երիտասարդ է, Գործառն քաղաքի ամենամեծ գերդաստաններից մեկի գավակը, ինչը չի կարող եական նշանակություն չու-



ՍԱՄՎԵԼ ՀՐՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

նենալ համայնքապետի ընտրության ժամանակ: Գործառնների մեծ մասը, ըստ մեր հարցումների, ակնկալում է քաղաքակիրք ընտրապայքար՝ առանց իրար հայիտելու, առանց միմյանց անցյալը փորվորելու, առանց մեկնելու պիտակավորելու:

Ընտրապայքարի գլխավոր հարցը պետք է լինի այն, թե թեկնածուներից ով ինչպես է պատրաստվում լուծել Գործառն քաղաքի եւ համայնքի մեջ մտնող գյուղերի առջեւ ծառայած հարցերը, ով ինչպես է տեսնում բազմաբնակավայր համայնքի հիմնախնդիրները՝ ըստ լուծման առաջ-



ԱՐՇԱԿ ՄԿՐՏՉՅԱՆ

նահերթությունների: Եվ այդ ամենը, կարծում ենք, ի հայտ կգա թեկնածուների նախընտրական ծրագրերում, թեկնածուների հրապարակային բանավեճերում (յուրաքանչյուր հարթակ ընդունելի է):

Իսկ թեկնածուներից յուրաքանչյուրի նախընտրական թիմում ընդգրկված առանձին մարդիկ, ովքեր փորձում են ընտրապայքարի քողի տակ կամ տեղական իշխանության լծակների օժանդակությամբ իրենց անձնական ընդդիմախոսներից վրեժ լուծել եւ իրենց չեղած-չունեցած վարկանիշը ցուցանել, տեղ չպիտի գտնեն:

Ինչ վերաբերում է ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման օրինակառությանը, վարչական ռեսուրսի չեզոքությանը, ապա դրանք լեգիտիմ ընտրության պարտադիր եւ անշրջանցելի պայմանն են: Շատ կարելու է լինելու մարզպետի պահվածքը. եթե զոնե մեկ անգամ նախընտրական շրջանում երեւա Գործառն, եթե մարզպետարանից որեւէ մեկը զանգահարի Գործառն ենթակա կառույցների ղեկավարներին, ապա օրինական ընտրության մասին խոսք լինել չի կարող՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Դա շատ կարելու հանգամանք է, քանի որ գործող իշխանությունները մինչեւ հիմա չեն պատասխանել հարցին, թե ինչու է պաշտոնակարգը Գործառն համայնքի ընտրյալ ղեկավարը:

Միայն եւ միայն Գործառն ընտրող պետք է որոշի (առանց դրսի միջամտության), թե ով է առաջիկա տարիներին ղեկավարելու համայնքը:

Նման ընտրության արդյունքում Գործառն համայնքի ղեկավար դարձած անձնավորությունը, անշուշտ, կլինի բոլորիս համար ընդունելի համայնքապետ: Եվ պարտավոր թեկնածուն այդ դեպքում առաջինը պետք է շնորհավորի հաղթողին:

Միայն եւ միայն այդպես կարող ենք նոյեմբերի 5-ից հետո ունենալ ավելի միասնական, ավելի համերաշխ ու համախումբ, քիմախորհրդությունից եւ վրեժխնդրությունից զերծ համայնք:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
17 հոկտեմբերի 2017 թ.

«Արմաթ» ինժեներական լաբորատորիա՝ Հարժիսի միջնակարգ դպրոցում

էջ 1 «Մեր նպատակը լավագույն արդյունք ապահովելն է՝ մեր հնարավորությունների, աշակերտների ներուժի սահմաններում», - նշեց Ն.Եսայանը:

Խմբակավար Նարեկ Սամսոնյանի խոսքով. «Աշակերտները մեծ սիրով են մասնակցում, նույնիսկ մի կերպ են տուն ուղարկում: Աշխատում ենք «Աղուէս», «Կրիայ» ծրագրերով, դեռ մեկ ամիս է, ինչ գործում է լաբորատորիան, համոզված են, հետագայում լավ արդյունքներ կարծանագրենք՝ ժամանակի ընթացքում համագործակցելով նաև այլ դպրոցների ինժեներական լաբորատորիաների հետ: Մյուս կողմից, համակարգչային աշխարհում անձը չի կարող մրցունակ լինել: Այսօր անհնար է պատկերացնել զարգացած շինարարություն, գյուղատնտեսություն, իրավաբանություն կամ մեկ այլ ոլորտ առանց SS ոլորտի», - նշեց Ս.Վարդանյանը՝ հավելելով, որ խմբակի անդամներին հնարավորություն է տրվում ուսանել համակարգչային ծրագրավորման հիմունքներ («Աղուէս» և «Կրիայ»), ռոբոտաշինություն են այլև, մասնակցել տարբեր մրցույթների, տեխնոլոգիական և ինովացիոն ճամբարների:

Վերջերս տեղի ունեցած «Դիջիթալ Էքսպո-2017» ցուցահանդեսի ընթացքում լաբորատորիան հաջողությամբ մասնակցել է մրցույթի, որի արդյունքում լաբորատորիան հանձնարվել է իրականացնել «Սոցիալական արդյունավետության մոնիթինգ» ծրագրի իրականացումը:

Օրագրի ընթացքը բաղկացած է չորս փուլից՝ խմբակի վայրի և խմբակավարի ընտրություն, խմբակավարի վերապատրաստում (4 փուլով), «Արմաթ» լաբորատորիայի տեղակայում ընտրված վայրում և ծրագրի ներդրման ընթացքի վերահսկում (մոնիթորինգ) և խորհրդատվական ծառայությունների իրականացում: Ի դեպ, խմբակավար-ուսուցչի աշխատավարձը վճարում է պետությունը:



ԱՎԵՏ ՔՈՆՅԱՆ



ՉԱԽՈՒՄ ՍԵՐՐՈՎ ԿԱՐՈՒՆԱՅԱՆ

րատորիաների հետ: Այստեղ շատ կարևոր են նաև աշակերտների գիտելիքները մաթեմատիկա, ֆիզիկա առարկաներից»:

12-րդ դասարանի աշակերտ Արտյունը, ով, չնայած ընտրել է հումանիտար ուղղությամբ մասնագիտություն, հաճույքով է մասնակցում խմբակին: Այդ պահին, երբ մենք մոտեցանք, նրանց խումբը փորձում էր անհմացիա ստեղծել: Ինչպես նշեց Արտյունը, ինժեներական լաբորատորիայի ընձեռած հնարավորությունները բազմաբնույթ ու բազմազան են, սրա միջոցով կարող են յուրաքանչյուր մտահղացում իրականություն դարձնել՝ ստեղծելով տարբեր խաղեր, անհմացիաներ և այլն:

Լաբորատորիայի բացմանը ներկա էր նաև Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության ներկայացուցիչ, «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների ներդրման ծրագրի համակարգող Սեդրակ Վարդանյանը, ով նշեց, որ մոտ չորս տարի գործող ռոբոտաշինության և ինժեներական լաբորատորիա-խմբակների թիվը հանրապետությունում հասնում է արդեն 210-ի՝ շուրջ 5000 մասնակիցներով: «Այն նախատեսված է հանրակրթական և կրթական այլ հաստատությունների համար, որը երեխաներին հնարավորություն է տալիս 5-րդ դասարանից սկսած առնչվել բարձր տեխնոլոգիաների հետ, առանց դրանց տիրապե-

ծամանակ, որ ունեցավ մոտ 70 հազար այցելու, իրականացվեց իրեր փնտրող և տեղափոխող ռոբոտների մրցույթ, որտեղ հաղթող ճանաչվեց Տավուշի մարզի Արծվաբերդ գյուղի թիմը:

«Այս լաբորատորիան, նախելառաջ, մասնագիտական կողմնորոշման հնարավորություն է տալիս, մասնավորապես Հայաստանում, որտեղ աշխատատեղերի պակաս կա, իսկ միայն SS ոլորտում այսօր ունենք 2000-3000 թափուր տեղ: Ինտերնետն ամբողջ աշխարհը մոտեցնում է, և այսօր դու կարող ես տանը նստած տարբեր պատվերներ ընդունել և մեծ գումարներ աշխատել: Սա նաև արտագաղթի դեմ ուղղված միջոց է: SS այն ոլորտն է, որի արտադրության համար ո՛չ բարեկարգ ճանապարհներ են անհրաժեշտ, ո՛չ մեծածավալ ներդրումներ, և հնարավոր է ապրել քո համայնքում՝ լինի գյուղ թե քաղաք, և աշխատել, նույնիսկ համախոհներով ընկերություններ ստեղծել և ամենակարևորը՝ չարտագաղթել», - նշեց Ս.Վարդանյանը:

Օրագիրն իրականացվում է պետության հետ համատեղ, նաև բարերարների միջոցով: Նման լաբորատորիա ունենալու համար նախելառաջ անհրաժեշտ է 10 հազար ԱՄՆ դոլար միանվագ ներդրում, որն իր մեջ ներառում է համակարգչային տեխնիկան և ծրագրերը (ե-

հատուկ բաժին՝ ծրագրի աջակցման և նվիրատվությունների համար: Աջակցել ցանկացողները կարող են ընտրել այն համայնքը, դպրոցը, որտեղ ցանկանում են ներդրում կատարել:

Բարերար Ավետ Քոնյանից փորձեցինք տեղեկանալ նաև գյուղում իրականացվելիք հետագա ծրագրերի մասին, քանի որ Հարժիսում նա արդեն իսկ մի քանի նախաձեռնության հեղինակ է դարձել, այն է՝ հայրական օջախի նորոգում, համայնքի արտաքին լուսավորության ցանցի անցկացում, գյուղի գերեզմանատան պարսպի կառուցում: Կատարած աշխատանքների մասին բարերարը համեստորեն լռեց՝ համարելով, որ դրանք պետք չէ հանրային քննարկման առարկա դարձնել: «Ինչ վերաբերում է հայրական օջախի վերականգնմանը, ապա դա պատմության կրկնությունն է. ժամանակին նույն քայլը կատարեց նաև հայրս, այժմ՝ ես՝ ժամանակի պահանջով և սրտի ցանկությամբ: Ընդհանրապես ապրելու տարբեր ձեռք գոյություն ունեն, դրանցից առաջին տարբերակը հող, արմատ, շիվ, ծառ,

բերք սկզբունքով ապրելն է և երկրորդը՝ մոլախոտ, որ պատահական քամիների բերումով սերունդ աճել օտար հողում, ապրել քոչվոր կյանքով: Ծնված օրից միշտ լսել ենք մեր հայրենիքի մասին, արյան և կաթի միջոցով ստացել հայրենի եզերքի համոզեց սերը, որ ապրում է մեր մեջ՝ անկախ նրանից, թե կյանքի բերումով որտեղ ենք ապրում, ինչը չի խանգարում մեզ լինել հայ, գործիք, հարժիսեցի: Կարծում եմ՝ հոգու խորքում բոլորն էլ սիրում են իրենց ծննդավայրը, և եթե կա նրան օգտակար լինելու ցանկություն, ուրեմն կան հնարավորություն, միջոցներ և ժամանակ, - նշեց Ա.Քոնյանը՝ հավելելով. - հայրենի գյուղը բարգավաճ տեսնելու շատ մեծ ցանկություն ունեմ, ինչը միայն իմ հնարավորությունից կախված չէ: Իմ հնարավորությունները մանր բաներ են, անհրաժեշտ պայմանը բնակիչների մեծ ցանկությունն է և մատաղ սերնդի լավ կրթություն ստանալը»:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
7 հոկտեմբերի 2017թ.



ԱՐԱՔՍՅԱՍԱՐԳՍՅԱՆ. «Հուսանք՝ մի օր ըստ արժանվույն կգնահատեն բուժքրոջ կարելուր մասնագիտության դերը»

Կապանի պետական բժշկական քոլեջը հիմնադրվել է 1960թ. հուլիսին եւ մինչեւ 1961թ. սեպտեմբերի 29-ը գործել որպես Երեւանի բժշկական ուսումնարանի մասնաճյուղ, որից հետո առանձնացվել եւ դարձել է ինքնուրույն ուսումնարան: 1992թ. հոկտեմբերից ուսումնարանը վերակազմակերպվել եւ դարձել է «Կապանի բժշկական ուսումնարան» պետական ՓԲԸ, 2004թ. մայիսի 26-ից վերանվանվել է «Կապանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի: Քոլեջում ուսումնառությունը իրականացվում է միջազգային չափանիշներին, մասնագիտական կրթական չափորոշիչներին համապատասխան ուսումնական պլաններով, առարկայական ծրագրերով եւ ուսումնամեթոդական անհրաժեշտ փաստաթղթերով:

«Այս պահին քոլեջում սովորում է 112 ուսանող՝ 12 տղա, 100 աղջիկ, 100 ուսանող պետպատվերի շրջանակում, 12 ուսանող վճարովի ուսուցմամբ: Ինչպես գիտեք, ընդունելության կարգի համաձայն, սովորելու հարցում տարիքային սահմանափակում չկա. քոլեջում 26 տարեկանից բարձր ընդա-

ծրագրերում ներառել նրանց վիճակը բարելավող կետեր», - իր մտահոգությունը հայտնեց Ա.Սարգսյանը:

Համապատասխան կարգի համաձայն՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունն ավարտած շրջանավարտն իրավունք ունի շարունակել ուսումը բարձրագույն ուսումնական հաստատությունում՝ իր մասնագիտությանը համապատասխան բաժնում՝ հեռակա ուսուցմամբ երկրորդ կուրսում: Բայց խոսքը չի վերաբերում Երեւանի պետական բժշկական համալսարանին, քանի որ այնտեղ ընդունվելու համար քոլեջի շրջանավարտը պետք է հանձնի միասնական քննություն, բայց լրացուցիչ փուլով: Տնօրենը ոգեւորությամբ է նշում հատկապես այն շրջանավարտների անունները, ովքեր սովորում են Երեւանի պետական բժշկական համալսարանում՝ Անիկ Պատվականյան, Սեդա Ղազարյան, Աննա Գարությունյան: Շրջանավարտներն իրենց հետագա, արդեն բարձրագույն կրթությունը շարունակում են ստանալ նաեւ Երեւանի Խ.Ա.բուվյանի անվան պետական մանկավարժական, Գորիսի պետական համալսարանների համապատասխան բաժիններում:

Չնայած միջազգային կազմելիս, հաշվի առնելով դիմորդների սակավությունը, հենվելով դրանից բխող հնարավոր ռիսկերի վրա՝ մշակել են հետևյալ կետերը՝ աշակերտների մասնագիտական կողմնորոշման աշխատանքները հնարավորինս ուժեղացնել, սերտ կապեր հաստատել հանրակրթական դպրոցների հետ, ստեղծել կարիերայի խորհուրդ, բաց դասեր կազմակերպել եւ այլն: Տնօրենի կարծիքով՝ իրենք թերահուն են նաեւ բնակչության շրջանում իրագրավածության համապատասխան աշխատանքներ կազմակերպելիս, ուստի պետք է օգտագործել բոլոր հնարավոր միջոցները քոլեջը, նրա գործունեությունն ու հնարավորությունները լուսաբանելու համար:

Շենքով եւ համապատասխան կաբինետներով շրջելիս ակնատես եղանք հնամաշ գույքի, որ թարմացնելու խիստ կարիք ունի: Երկու է, դա չի խանգարում պատշաճ մակարդակով դասընթաց կազմակերպելուն, բայց խորհրդային շրջանից մնացած պատասխանները, ուսանողական գույքն այնքան էլ ոգեւորիչ տպավորություն չեն թողնում: «Մեր ֆինանսական միջոցներով հնարավոր չէ լուրջ վերանորոգման, թարմացման աշխատանքներ իրականացնել, ինչ-որ կազմակերպությունների կատարածի համար էլ, իհարկե, գոհ ու շնորհակալ ենք, բայց այդ փոքրիկ միջոցներով հնարավոր չէ լուրջ փոփոխություններ իրականացնել: Մեր տարածաշրջանում կան խոշոր կազմակերպություններ, որոնք կարող են աջակցել ուսումնական հաստատություններին բարեկարգման համար, ինչը լրացուցիչ խթան կհանդիսանա ուսանողների թվի ավելացման համար: Միշտ լավատես ենք, հուսանք, մի օր ըստ արժանվույն կգնահատեն այս կարելուր մասնագիտության դերը», - նշեց տնօրենը՝ հավելելով, որ Համալսարանի ղեկավարը իրենք ենք, ուստի ընդունելություններ իրականացվում է «Կենսաբանություն» առարկայից քննություն հանձնելով: Կարծում են՝ սա երբեմն դպրոցի շրջանավարտին որոշ առումով սահմանափակում է, մասնագիտությունը ընտրելիս երկընտրանքի առաջ կանգնեցնում: Բայց դժգոհ չենք ընդունելությունից, իհարկե, ցանկալի կլիներ շատ ավելի մեծ թվով դիմորդներ ունենալ: Ինչպես նախկինում, այս ուստարում եւս գերակշռում է «Քույրական գործ» մասնագիտության հանդեպ հետաքրքրությունը», - նշեց տիկին Սարգսյանը:



մենը 10 ուսանող ունենք, որից 6-ը՝ վճարովի, 4-ը՝ անվճար հիմունքներով է կրթություն ստանում», - այսպես համառոտ ներկայացրեց քոլեջի ընդհանուր պատկերը «Կապանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենը: Արաքսյա Սարգսյանը, ով օգոստոսի 31-ին անցկացված տնօրենի թափուր տեղի համար մրցույթում հաղթող ճանաչվեց: Նա մասնագիտությամբ կենսաֆիզիկոս է, 1996թ.-ից աշխատում է այս հաստատությունում, ընդ որում՝ 2002թ.-ից՝ ուսումնական մասի վարիչ, 2006թ.-ից՝ ուսումնադաստիարակչական գծով աշխատանքների փոխտնօրեն: «Քոլեջի նախկին, երկարամյա տնօրեն Ռոմիկ Սարգսյանին փոխարինեցի՝ նրա՝ Կապանի բժշկական կենտրոնի տնօրեն նշանակվելու պատճառով, եւ մինչեւ սահմանված կարգով մրցույթի անցկացումը վարեցի տնօրենի պաշտոնակատարի պարտականությունները», - տեղեկացրեց Ա.Սարգսյանը:

Ինչպես գիտեք, մրցույթներում թեկնածուները պարտավոր են ներկայացնել զարգացման ծրագրեր, եւ Ա.Սարգսյանից տեղեկացանք, թե որն էր իր ծրագրի այսպես կոչված մեխը. «Չարգացման ծրագիրը կազմելիս հենվել են այն բոլոր ռիսկերի, վտանգների վրա, որոնք այս տարիներին դժվարացրել են մեր հաստատության գործունեությունը: Օգտվելով մարզի ռազմավարական, համայնքի զարգացման եւ ԿԳ նախարարության կողմից մշակված բարեփոխումների ծրագրերից՝ կազմել են այն, ըստ որի՝ Կապանի պետական բժշկական քոլեջը մինչեւ 2022թ. կապահովի եւ կշարունակի իր կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում որակյալ կրթության մատուցումը շահառու կողմերին՝ ապահովելով կրթության որակի արտաքին եւ ներքին գնահատման չափանիշները՝ որակի կառավարման ներքին համակարգի ձեւավորման եւ մասնագիտական կրթության որակի ապահովման համար սահմանված չափորոշիչների պահանջները կատարելու միջոցով»:

Ընդամենը 12 վճարովի հիմունքով սովորող կա ուսումնական հաստատությունում, բնականաբար, համար առաջին խնդիրը ֆինանսական բնույթի է, քանի որ այդ չնչին գումարներով հնարավոր չէ նորմալ արտաբյուջե ձեւավորել: Տնօրենը ցավով է արձանագրում, որ թե՛ մարզի, թե՛ համայնքի զարգացման ծրագրերում ներառված չէ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու կետը: «Նա մեծ գումար չէ, բայց նաեւ պիտի հասկանան, որ տարածաշրջանում շատ չեն միջին մասնագիտական, հատկապես ոլորտային մասնագիտության ուսուցմամբ հաստատությունները, ուստի նրանց հանդեպ նույնպես առանձնակի ուշադրություն է հարկավոր ցուցաբերել, զարգացման

ծրագրերում ներառել նրանց վիճակը բարելավող կետեր», - իր մտահոգությունը հայտնեց Ա.Սարգսյանը:

Համապատասխան կարգի համաձայն՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունն ավարտած շրջանավարտն իրավունք ունի շարունակել ուսումը բարձրագույն ուսումնական հաստատությունում՝ իր մասնագիտությանը համապատասխան բաժնում՝ հեռակա ուսուցմամբ երկրորդ կուրսում: Բայց խոսքը չի վերաբերում Երեւանի պետական բժշկական համալսարանին, քանի որ այնտեղ ընդունվելու համար քոլեջի շրջանավարտը պետք է հանձնի միասնական քննություն, բայց լրացուցիչ փուլով: Տնօրենը ոգեւորությամբ է նշում հատկապես այն շրջանավարտների անունները, ովքեր սովորում են Երեւանի պետական բժշկական համալսարանում՝ Անիկ Պատվականյան, Սեդա Ղազարյան, Աննա Գարությունյան: Շրջանավարտներն իրենց հետագա, արդեն բարձրագույն կրթությունը շարունակում են ստանալ նաեւ Երեւանի Խ.Ա.բուվյանի անվան պետական մանկավարժական, Գորիսի պետական համալսարանների համապատասխան բաժիններում:

Չնայած միջազգային կազմելիս, հաշվի առնելով դիմորդների սակավությունը, հենվելով դրանից բխող հնարավոր ռիսկերի վրա՝ մշակել են հետևյալ կետերը՝ աշակերտների մասնագիտական կողմնորոշման աշխատանքները հնարավորինս ուժեղացնել, սերտ կապեր հաստատել հանրակրթական դպրոցների հետ, ստեղծել կարիերայի խորհուրդ, բաց դասեր կազմակերպել եւ այլն: Տնօրենի կարծիքով՝ իրենք թերահուն են նաեւ բնակչության շրջանում իրագրավածության համապատասխան աշխատանքներ կազմակերպելիս, ուստի պետք է օգտագործել բոլոր հնարավոր միջոցները քոլեջը, նրա գործունեությունն ու հնարավորությունները լուսաբանելու համար:

Շենքով եւ համապատասխան կաբինետներով շրջելիս ակնատես եղանք հնամաշ գույքի, որ թարմացնելու խիստ կարիք ունի: Երկու է, դա չի խանգարում պատշաճ մակարդակով դասընթաց կազմակերպելուն, բայց խորհրդային շրջանից մնացած պատասխանները, ուսանողական գույքն այնքան էլ ոգեւորիչ տպավորություն չեն թողնում: «Մեր ֆինանսական միջոցներով հնարավոր չէ լուրջ վերանորոգման, թարմացման աշխատանքներ իրականացնել, ինչ-որ կազմակերպությունների կատարածի համար էլ, իհարկե, գոհ ու շնորհակալ ենք, բայց այդ փոքրիկ միջոցներով հնարավոր չէ լուրջ փոփոխություններ իրականացնել: Մեր տարածաշրջանում կան խոշոր կազմակերպություններ, որոնք կարող են աջակցել ուսումնական հաստատություններին բարեկարգման համար, ինչը լրացուցիչ խթան կհանդիսանա ուսանողների թվի ավելացման համար: Միշտ լավատես ենք, հուսանք, մի օր ըստ արժանվույն կգնահատեն այս կարելուր մասնագիտության դերը», - նշեց տնօրենը՝ հավելելով, որ Համալսարանի ղեկավարը իրենք ենք, ուստի ընդունելություններ իրականացվում է «Կենսաբանություն» առարկայից քննություն հանձնելով: Կարծում են՝ սա երբեմն դպրոցի շրջանավարտին որոշ առումով սահմանափակում է, մասնագիտությունը ընտրելիս երկընտրանքի առաջ կանգնեցնում: Բայց դժգոհ չենք ընդունելությունից, իհարկե, ցանկալի կլիներ շատ ավելի մեծ թվով դիմորդներ ունենալ: Ինչպես նախկինում, այս ուստարում եւս գերակշռում է «Քույրական գործ» մասնագիտության հանդեպ հետաքրքրությունը», - նշեց տիկին Սարգսյանը:



ուսանողների թվի պակասով», - նշեց տնօրենը: Դասախոսները պարբերաբար անցնում են անհրաժեշտ վերապատրաստման դասընթացներ՝ ծանոթանալով կրթական չափորոշիչներին, ուսումնական ծրագրերի փոփոխություններին: Պրակտիկաներ անցկացնելու հարցում եւս խնդիր չունեն, քանի որ, նախապես կնքված պայմանագրերի համաձայն, համապատասխան կազմակերպություններում հնարավորություն ունեն տեսական գիտելիքները վերածել գործնականի:

Ինչ վերաբերում է քոլեջի շրջանավարտների աշխատանքային զբաղվածությանը, ապա, տնօրենի տեղեկացմամբ, վիճակագրությունը ցույց է տալիս, որ նրանց մոտ 25 տոկոսն աշխատում է իր մասնագիտությամբ: «Ամեն տարի անցկացնում ենք համապատասխան վերլուծություն, օրինակ՝ 2016-17 ուստարվա ղեղազորությունը բաժնի 14 շրջանավարտից 10 հոգի աշխատում է, որից 4-ը՝ իր մասնագիտությամբ: Տարվա վերջին նմանատիպ եւս մեկ ուսումնասիրություն կանցկացնեք՝ պատկերը «թարմացնելու» համար», - նշեց Ա.Սարգսյանը:

«Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտությամբ «Վորլդ Վիժն Գայաստան» կազմակերպության պատվերով երկու անգամ անց են կացրել կարճաժամկետ վերապատրաստման դասընթացներ, նախատեսել են հիվանդների, տարիքային տարբեր խմբի անձանց համար խնամակալի կարգեր պատրաստելու ծրագիր կազմել: «Առաջիկայում, երբ անցնենք մոդուլային համակարգով ուսուցման, կարճաժամկետ վերապատրաստման դասընթացների թիվը հնարավոր կլինի ավելացնել», - նշեց տնօրենը:

Չնայած անելիքներից խոսելիս տնօրենը նշեց, որ, որպես միջին մասնագիտական կրթություն իրականացնող հաստատություն, հետագայում միզուցեց նոր մասնագիտություններ ներդնել աշխատաշուկայի պահանջները հաշվի առնելով: «Ժամանակին «Լաբորատոր փոխորոշում» մասնագիտության գծով բաժին բացեցինք, բայց ոչ մի դիմորդ չունեցանք, չգիտեմ պատճառը իրագրավածության պակասն էր, թե՛ դրա ընձեռած աշխատանքային հնարավորությունները լիարժեք չպատկերացնելը»:

Ուսումնական գործընթացին առնչվող բոլոր հարցերը ժամանակի ընթացքում կարգավորվում են, դե իսկ չենք այն պայմանների բարելավման ուղղությամբ աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ են ավելի մեծ ներդրումներ: Ինչպես արդեն նշեցինք, հնամաշ գույքը, խորհրդային ժամանակաշրջանը հիշեցնող լսարանների, միջանցքների կահավորումը դժվար թե այսօրվա երիտասարդի համար ակնհաս լինեն, ուստի ակնկալում ենք, որ մոտ ապագայում միջին եւ նախնական մասնագիտական կրթություն իրականացնող, վերանորոգման կարիք ունեցող հաստատությունների վրա ավելի մեծ ուշադրություն կդարձնեն, մասնավորապես 12-ամյա կրթության պարտադիր դառնալու պայմաններում:

ՎԱՐԴԱՆ ՔՈԶԱՐՅԱՆ. «Այսօր պիտի մտածել սերնդափոխության մասին»



Ամռանը լրատվամիջոցներում քննարկվող հրատապ թեմաներից ուսումնական հաստատություններն առաջին կուրսեցիներով համալրելու խնդիրն էր:

«Այսօրվա քննարկում» էլ անդրադարձավ մարզի եւ բուհերում, եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում իրականացված ընդունելության գործընթացին:

Այս անգամ որոշեցինք ներկայացնել Կապանի արվեստի պետական ընդունելության գործընթացը:

Կրթօջախը նոր ուսումնական տարին սկսել է 104 սովորողով: Նոր ընդունվածները 34-ն են, երեքով քիչ, քան նախորդ տարի, այնուամենայնիվ ցուցանիշը դրական են համարում: Ըստ մասնագիտությունների՝ առաջին կուրսեցիների թիվը հետեւյալ պատկերն է ներկայացնում:

Լարային գործիքների բաժնում երեք հոգի է ընդունվել, երեքն էլ ջութակի դասարան, մեկը՝ Սիսիանից: «Եթե նախորդ տարիներին փնտրում էինք մեկին, ով պիտի ջութակի դասարանում սովորեր, այս տարի երեքն ունեցանք», - ասում է կրթօջախի տնօրեն Վարդան Քոչարյանը: «Ժողգործիքների» բաժնում երկու, «Դերասանական արվեստ» երկու, «Երգեցողություն» երեք է «Գեղանկարչություն» երեք: Պարավեստի բաժնում նոր ընդունվածները չորսն են, երգչախմբավարությունում երկուսը: Համեմատաբար շատ են «Դիզայն» մասնագիտության գծով ընդունվածները՝ 12: Իսկ «Երաժշտության տեսություն» եւ «Եստրադային արվեստ» մասնագիտությունների գծով, ահա, քանի տարի է դիմորդ չի լինում:

Դիմորդների աշխարհագրու-

թյունը ընդգրկում է ողջ մարզը՝ Կապան, Սիսիան, Գորիս, Մեղրի, Ագարակ, Քաջարան քաղաքներ, նաեւ գյուղական համայնքներ՝ Շինուհայր եւ այլն:

Տնօրենին մտահոգում է փաստը, որ դաշնամուրի բաժնում ընդամենը երկու հոգի է սովորում: Եվ դա այն դեպքում, երբ մարզի երաժշտական ու արվեստի դպրոցներում սովորողների մի սովոր մասը դաշնամուրի բաժնում են սովորում: Բայց նաեւ այլ կարծիք ունի. «Այնպես էլ չէ, որ երաժշտական դպրոցներում սովորող բոլոր երեխաները պիտի դիմեն արվեստի քոլեջ, նայած ծնողներն ինչի համար են իրենց երեխաներին տանում երաժշտական դպրոց: Ընդհանուր պատրաստվածությամբ, թե՛ հետագայում շարունակելու ուսումը երաժշտական մասնագիտական կրթություն ստանալու համար»:

Վարդան Քոչարյանի փոխանցմամբ՝ 34 ընդունվածից վեցը պիտի սովորեր վճարովի համակարգով: Ինքը խնդրանքով դիմել է 33 կրթության եւ գիտության նախարարին, ով էլ ընդառաջել է խնդրանքին, եւ վեցն էլ փոխադրվել է անվճար ուսուցման համակարգ: Այս պահի դրությամբ 34 առաջին կուրսեցի անվճար համակարգում են սովորում: 2016-2017 ուստարվա շրջանավարտներից երեքն ընդունվել է բարձրագույն ուսումնական հաստատություն, երկուսը՝ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա՝ Մերի Պետրոսյան (դաշնամուր), Լիա Գրիգորյան (ֆլեյտա), Իսկ Մանե Արզումանյանը՝ գեղարվեստի պետական ակադեմիա:

Կրթօջախի սովորողները նախորդ ուստարում հաջողություններ են գրանցել մրցույթ-փառատոնե-

րում (այդ թվում՝ միջազգային): Եվ մտադիր են նոր ուստարում եւս շարունակել լավագույն ավանդույթները, մասնավորապես 2016 թվականի դեկտեմբերին գեղանկարչության, դեկորատիվ եւ կիրառական արվեստի «Նոր ձեռքեր» համրապետական առաջին մրցույթում Օքսաննա Քոչարյանը, Արփինե Ավագյանը, Թամարա Հակոբյանն արժանացել են երկրորդ եւ երրորդ մրցանակների, իսկ 2017 թվականի ապրիլին Գյումրիում կայացած «Վերածնունդ» ութերորդ միջազգային մրցույթ-փառատոնում Միեր Ամիրջանյանը (շվի) եւ Գոհար Մովսիսյանը (քանոն) արժանացել են համապատասխանաբար երկրորդ եւ երրորդ մրցանակների:

Պատեհ առիթ է ներկայացնելու կրթօջախի տնօրեն Վարդան Քոչարյանին: Ծնվել է Քաջարանում, միջնակարգ կրթություն ստացել Կապանի N2 միջնակարգ դպրոցում, երաժշտական սկզբնական կրթություն՝ N1 դպրոցում: 1982-ին ընդունվել է Կապանի երաժշտական ուսումնարան (ժողովրդական նվագարանների բաժին), սիրով է թվարկում իրեն դասավանդած մանկավարժների անունները՝ Հայկ Ավագյան, Անահիտ Բաղդասարյան, Մարիցա Պետրոսյան, բարձր կուրսերում դասավանդել է երջանակահիշատակ Գառնիկ Խաչատրյանը (թառի դասարան): Խոստովանում է. «Երաժշտության նկատմամբ սերն իմ մեջ Գառնիկ Խաչատրյանն արթնացրեց, որ որոշեցի ուսումս շարունակել Կոմիտասի անվան կոնսերվատորիայում (Հովհաննես Դարբինյանի թառի դասարան)»: 1994-ին վերադարձել է հայրենի քաղաք, 1996-ին նշանակվել N2 երաժշտական դպրոցի տնօրեն, կրթօջախը ղեկավարել է մինչեւ վերջերս: «Շնորհալի սաներ շատ են ունեցել, մի մասն ավարտել է Կապանի երաժշտական ուսումնարանը, հետո՝ կոնսերվատորիան», - վերհիշում է անցած տարիները:

Ժողովրդական նվագարանների հանդեպ հետաքրքրությունը նվազեց է, ի՞նչ կարծիք ունի Վարդան Քոչարյանը. «Նման երեւույթ նկատվեց 1980-ականների վերջին, 1990-ականների սկզբին, երբ համրապետությունում մշակութային վակուում էր, բայց հետո բավականին երիտասարդ կատարողներ ի հայտ եկան, հեռուստատեսությունում («Շանք») հե-

տաքրքրական նախագծեր իրականացվեցին, ինչպես, ասենք, «Ժողովրդական նվագարան» եւ այլն: 2006 թվականից համրապետության կառավարության որոշմամբ՝ ազգային նվագարանների ուսուցումը իրականացվում է պետական կրթության նախարարի կողմից: Իհարկե, չի կարելի ասել, որ քամանչայի, թառի, ուղի դասարաններ դիմողներ կան, երեւույթը նկատվում է ամեն տարի: Այս տարի մեր քոլեջի ժողգործիքների բաժին ընդունվել է մեկ շվիսիս, մեկ դիվազո: Կարծում եմ սրանով ամեն ինչ ասված է»:

Կրթօջախի հիմնախնդիրներից տնօրենն առանձնացրեց մասնաշենքի ջեռուցումը եւ երաժշտական գործիքների պահպանումը, ընդ որում այս երկուսը սերտորեն շարկապված են իրար. «Արվեստի քոլեջի երգեհոնը մատների վրա կարելի է հաշվել հանրապետությունում, որ հատուկ ուշադրության անհրաժեշտություն ունի, ջերմության կարիք ունի: Չմռանը սենյակները ջեռուցում ենք վառարաններով եւ էլեկտրական սալիկներով: Եթե դասասենյակում դաշնամուր եւ ռոյալ կա, այդտեղ վառարան վառելս ո՞րն է, իսկ էլեկտրական սալիկով չես կարող այդքանը տաքացնել: Եվ խնայողության մասին ես մտածում եմ, եւ ուզում եմ, որ մարդիկ չմտնեն: Օրախնդիր է նաեւ քոլեջի Վահագն Ստամբուլյանի անվան երգեհոնային դահլիճի նորոգումը, որ դեռեւս հայ-ադրբեջանական հակամարտության տարիներին տուժել էր հրետակածությունից: Դահլիճն իր հրաշալի ակուստիկայով զարմացրել է մայրաքաղաքից, այլ վայրերից ժամանած երաժիշտներին, բայց այժմ նորոգման խիստ կարիք ունի...»:

Իսկ ինչպիսի՞ն է արվեստի պետական քոլեջի՝ երաժշտական գործիքներով ապահովվածությունը. «Երաժշտական գործիքներով ապահովված ենք բավարար չափով, փողային որոշ գործիքների կարիք կա, նաեւ ժողովրդական նվագարանների: Խոսքը բարձրորակ գործիքների մասին է, երբ կրթական մակարդակը բարձրանում է, լավ գործիք ունենալու պահանջն էլ է ավելանում, հնչյունի արտաբերման որակն էլ պիտի բարձր լինի: Այնպես չէ, որ ինչ-որ

տեղ ընկած գործիք լինի, վերցնես ու նվագես»:

Կրթօջախը փորձում է մասնակցել Կապանում մշակութային կյանքի ծեսավորմանը, մասնավորապես տարիներ ի վեր հետեւողական առաջ է տարել դասական երաժշտություն պրոպագանդելու իր առաքելությունը:

Այսօրվա դրությամբ ինչպիսի՞նք է վիճակը. «Մշտապես միջոցառումներ անցկացվում են քոլեջի դահլիճում, որը նաեւ տրամադրում ենք դրեկ արվեստագետներին: Մի անգամ մայրաքաղաքից զանգահարեցին, թե ուզում են մեր դահլիճում երգեհոնային համերգային ծրագրով հանդես գալ, բայց խոսքը գործի վերաբերյալ: Ինչեւէ, մենք պատրաստ ենք այդ հարցում բոլորին ընդառաջել»:

Երբ ստանձնում էր քոլեջի տնօրենի պաշտոնը, Վարդան Քոչարյանն ասել է, թե իր նպատակը, նախեւառաջ, եղածին մի բան ավելացնելն է: Ի՞նչ է նա ավելացրել եղածին. «Ուսանողների քանակն է ավելացել, որոշակի թարմացվել է կրթօջախի գույքը, ձգտել ենք համեմատաբար օժտված երեխաներ ընդգրկել ուսումնական գործընթացում: Երկու տարին քիչ ժամանակ է որակական շոշափելի փոփոխության հասնելու համար: Կարելուք այն է, որ եթե ձգտում ու ցանկություն կա, դրական արդյունքները երկար սպասել չեն տա», - համոզմունք հայտնեց գրուցակիցս:

Վերջին հարցս վերաբերում էր արվեստի քոլեջի կարգերով ապահովվածությանը: Վ.Քոչարյանի տեղեկացմամբ՝ կրթօջախը մասնավարժներով համալրված է, առանձին մասնագիտությունների գծով դասավանդում են բարձրագույնավարտներ, ովքեր տարիների փորձն ու գիտելիքներն են հաղորդում իրենց սաներին. «Բայց չերկնջեք եւ ասենք, որ հեռու չէ այն օրը, երբ սերնդափոխության եւ բարձրագույնավարտ կարգերով համալրելու խնդիր ենք ունենալու, եւ նման անհրաժեշտություն է ծագելու ոչ միայն մեր ուսումնական հաստատությունում, այլեւ մանկական երաժշտական, արվեստի եւ գեղարվեստի դպրոցներում: Այնպես որ՝ հենց այսօր պիտի մտածել սերնդափոխության մասին»:

ՎԱՐՄ ՕՐԲԵՆԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ «ԻՄ ԶԵՌԱԿԵՐՏ ՀԱՅԱՍՏԱՆ ԾՐԱԳՐԻՆ ԱՆՀՐԱՑԵՑ ԵՆ ԱՐՇԵՍԱՎՈՐՆԵՐ»

«Իմ ձեռակերտ Հայաստանը» «Իմ Հայաստան» ծրագրի իրականացրած հիմնական ձեռնարկումներից մեկն է, որի նպատակն է աջակցել Հայաստանի գյուղական համայնքներում այնպիսի արհեստների զարգացմանն ու որոշ դեպքերում նաեւ դրանց վերականգնմանը, ինչպիսիք են փայտի փորագրությունը, քարի փորագրությունը, ասեղնագործությունը, գորգագործությունը, խեցեգործությունը եւ այլն: Համագործակցելով արհեստավորների եւ տեղաբնակ գործընկերների հետ՝ «Իմ ձեռակերտ

Հայաստան»-ը կազմակերպում է դասընթաց-սեմինարներ ապրանքի ձեւավորման եւ մշակման, մարկետինգի, ծախսերի հաշվարկման եւ գնագոյացման, տեխնիկական հմտությունների վերաբերյալ, որոնց նպատակն է տարածել եւ արժեւորել ձեռագործ արհեստները:

«Իմ Հայաստանին» անհրաժեշտ են արհեստագործ անհատներ կամ ձեռնարկություններ Գյումրիից եւ հարակից գյուղերից, Դիլիջանից եւ հարակից գյուղերից, Սիսիանից եւ հարակից գյուղերից, որոնք զբոսաշրջության շուկաների համար պատրաստում են վաճառում են տարբեր արհեստների մոդելներ, ինչպես օրինակ՝ փայտի փորագրություն, քարի փորագրություն, ասեղնագործություն, հելու-նագործություն, ձեռագործություն, գորգագործություն, խեցեգործություն ու ոսկերչություն՝ 2018թ. դասընթացներին եւ սեմինարներին մասնակցելու նպատակով: Ցանկացողները կարող են դիմել Աշխեն Խուրազմանին՝ զանգահարելով ստորեւ նշված հեռախոսահամարներով:

«Իմ Հայաստան» ծրագիրը ֆինանսավորվում է ԱՄՆ ՄՉԳ-ի կողմից եւ իրականացվում է Սմիթսոնյան ինստիտուտի կողմից:

«Իմ Հայաստան»-ը նպատակ է Հայաստանի մշակութային ժառանգության պահպանմանը ներառական եւ զարգացած զբոսաշրջության ոլորտի ձեւավորման միջոցով եւ աջակցում է երկրի բոլոր համայնքներին:

Լրացուցիչ տեղեկության համար կարող եք զանգահարել՝

Նուրեն Հայրապետյան, «Իմ Հայաստան» ծրագրի հարցազրույցման մասնագետ +37455050168 hayrapetyann@si.edu

Աշխեն Խուրազմանյան, «Իմ Հայաստան» ծրագրի ձեռնարկությունների զարգացման մասնագետ | +37455050176 khudaverdyana@si.edu

Հոկտեմբերի 12, 2017, Երեւան facebook.com/MyArmeniaProgram/ folklife.si.edu/cultural-sustainability/my-armenia/smithsonian



ՀԱՄԱՐՏԻ ԱՐՁԱՇԱՐ ԶԵՐՄՈՒԿՈՒՄ՝ ԿԱՊԱՆԻ ԼԵՈՆԱՀԱՐԱՏԱԾՄԱՆ ԿՈՄՔԻՆԱՏԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

Այս օրերին Ձերմուկում անցկացվեց եվրոպայի պատանեկան «Գրան Պրի» մրցաշարը, որ կազմակերպել է Հայաստանի շախմատի ակադեմիան, Շախմատի եվրոպական միության հետ համատեղ, Կապանի լեռնահարստացման կոմբինատի հովանավորությամբ: Հոկտեմբերի 8-ին Կապանի մանկապատանեկան մարզադպրոցի շախմատի խմբակի ութ պատանի շախմատիստ մարզիչ Ստեփան Խաչատրյանի հետ եղան «Ձերմուկ աշխարհ» առողջարանում, որտեղ անց է կացվում մրցաշարը:

Մրցավայր հասնելուն պես՝ պատանի շախմատիստները եւ Ձերմուկի շախմատի դպրոցի չորս սան տեղ զբաղեցրին շախմատի տախտակների շուրջ, նրանց հետ միաժամանակյա խաղի սեանս անցկացրեց Հայաստանի շախմատի ֆեդերացիայի փոխնախագահ, Հայաստանի շախմատի ակադեմիայի նախագահ, միջազգային գրոսմայստեր Սմբատ Լպուտյանը: Մինչեւ սեանսի մեկնարկը միջազգային մրցավար Նորայր Քալանթարյանը պատանի շախմատիստներին նախմերկայացրեց սեանսի կանոնները, հաջողություն մաղթեց դպրոցական շախմատիստներին, իսկ Սմբատ Լպուտյանը էլ կատակեց, թե շախմատ վաղուց չի խաղացել. հնարավոր է՝ վրիպումներ անի, այնպես որ՝ հնարավորություններ կան իրեն հաղթելու:

Մինչ ընթանում էր միաժամանակյա խաղի սեանսը՝ Կապանի լեռնահարստացման կոմբինատի հասարակայնության հետ կապերի եւ սոցիալական քաղաքականության գծով տնօրենի տեղակալ Վահրան Ավագյանը «Սյունյաց երկրին» մանրամասնեց, թե ինչպես է կազմակերպվել միաժամանակյա խաղի սեանսը. «2016 թվականի ապրիլի 28-ից Կապանի լեռնահարստացման կոմբինատը «Պոլիմետալ» խմբի կազմում է, եւ առաջնորդ-

վում է սոցիալական քաղաքականության այն սկզբունքներով, ինչ սկզբունքներ սահմանված են խմբի կողմից: Այդ քաղաքականության առաջնահերթություններից մեկը մանկապատանեկան սպորտին աջակցությունն է: Մենք «Պոլիմետալ» գործունեության բնակավայրերում նախապես ուսումնասիրում ենք սոցիալական, մշակութային, մարզական իրողությունները եւ գիտենք, թե զարգացման ինչ մակարդակի են Հայաստանում ինտելեկտուալ խաղերը, նախեսառաջ շախմատը: Այդ համատեքստում այս մրցաշարի՝ «Գրան Պրի» երկրորդ փուլը հովանավորելը միանգամայն օրինաչափ էր եւ բնականոն, բխում էր ընկերության սոցիալական քաղաքական սկզբունքներից: Նաեւ այս փոքր-ինչ ընդարձակ աշխարհագրություն ունեցող, մեր սոցիալական քաղաքականության շրջանակներում ֆինանսավորված միջոցառմանը մենք ցանկացանք, որ մասնակից լինեն կապանցի երեխաները, եւ դրա վկայությունն է այսօրվա միաժամանակյա խաղի սեանսը հայ շախմատի լավագույն ներկայացուցիչներից մեկի՝ միջազգային գրոսմայստեր Սմբատ Լպուտյանի մասնակցությամբ: Բացի այդ՝ նպատակն այն էր, որ կապանցի պատանի շախմատիստները հաղորդակից լինեն համաշխարհային մակարդակի շախմատային այս իրադարձությանը: Վստահ եմ՝ նրանց շախմատային կյանքում իրադարձությունը բեկումնային կլինի, կդառնա մի հաճելի հուշ, որ նրանց կուղեկցի հետագա մարզական կյանքում»:

Մոտ երեք ժամ տեւեց միաժամանակյա խաղի սեանսը: Պատանի շախմատիստներից միայն Կապանի N7 հիմնական դպրոցի ութերորդ դասարանի աշակերտ Գագիկ Մանուչարյանին հաջողվեց 37-րդ քայլում հաղթել գրոսմայստերին: Սյունյեցիները խաղատախտակը թ-

ղեցին պարտված: Միաժամանակյա խաղի սեանսից հետո Սմբատ Լպուտյանն անկեղծ գրույց ունեցավ պատանի շախմատիստների հետ, վերլուծեց որոշ մասնակիցների պարտիաները, մատնանշեց նրանց կողմից թույլ տրված վրիպումները: Նա հատկապես ընդգծեց 12-ամյա Ալեն Գեւորգյանի, ինչպես սեանսի ամենակրտսեր մասնակցի՝ յոթնամյա Անդրանիկ Թադևոսյանի խաղը: Գրոսմայստերը հուշանվերներ հանձնեց հաղթողին եւ այս երկուսին: Այնուհետեւ պատանի շախմատիստները բարձրացան «Ձերմուկ աշխարհ» առողջարանի երկրորդ հարկ, որտեղ ընթանում էր եվրոպայի պատանեկան «Գրան Պրի» մրցաշարի հերթական տուրը:

Հրաժեշտից առաջ «Սյունյաց երկիրը» ծեպագրուց ունեցավ ծանաչված գրոսմայստերի հետ:

- Պարո՛ն Լպուտյան, ի՞նչ է արվում շախմատը մարզերում զարգացնելու նպատակով: Ստացվել է այնպես, որ ամեն ինչ կենտրոնացված է մայրաքաղաքում՝ գիտությունը, տնտեսությունը, մշակույթը, սպորտը, իսկ մարզերը, ասես, հայտնվել են աղքատ ազգականի կարգավիճակում:

- Ես այդպես չեմ կարծում, իրականում մտածում ենք մարզերի մասին, շատ տեղերում շախմատային մասնաճյուղեր են բացվել: Մենք հիմա հեռավար ուսուցման ծրագիր ենք իրականացնում, երկուերեք ամսից կլինի: Դրա շնորհիվ կարող ենք երեւանից եւ միաժամանակյա խաղի սեանսներ տալ, եւ դրա մասնակիցների հետ վերլուծել պարտիաները, եւ պարապմունքներ անցկացնել, այնպես որ՝ արդեն կապ չունի պատանի շախմատիստը երեւանում՝ է բնակվում, Կապանում, թե՛ որտե՛ մի այլ տեղ: Մենք այդ հնարավորությունը կունենանք, մնում է պատանի շախմատիստները նվիրվածություն եւ աշխատասիրություն դրսեւորեն եւ հայտնի շախմատ-



տիստներ դառնան:

- Ի՞նչ կասեք մրցաշարի հովանավորի մասին:

- Ինչ խոսք, «Պոլիմետալ» խմբի մեջ մտնող Կապանի լեռնահարստացման կոմբինատի կողմից կատարված քայլը ողջունելի է, քանի որ շախմատը Հայաստանում շատ սիրված եւ ընդունված մարզաձեւ է: Փաստն ինքնին խրախուսելի է, որ ընկերությունն իր պլանին է ներդրում Հայաստանի շախմատի զարգացման գործում: Այս մրցաշարը, որ անցկացվում է Ձերմուկում, խոսում է այն մասին, որ Հայաստանում նորից կարելի է բարձրակարգ մրցաշարեր անցկացնել, որտեղ մեր պատանի շախմատիստները կարող են եւ խաղալ, եւ իրենց ուժերը համեմատել աշխարհի լավագույն պատանիների հետ:

- Հախմատի ֆեդերացիան չի՞ նախատեսում, որ մի միջազգային մրցաշար Կապանում տեղի ունենա, քանզի ինչպես տեսնում ենք, հովանավորի պակաս չի լինի:

- Կարծում եմ՝ դեռ այդ հարցը կքննարկենք, որովհետեւ այդպիսի

մտքեր կան, անշուշտ, կլինեն մրցաշարեր, որոնք կանցկացվեն Սյունիքում նույնպես:

- Դուք շախմատային Հայաստանում ծանաչված դեմք եք, մի ժամանակ հանրապետության շախմատի առաջատարն էիք, ուստի հարկ ենք համարում ձեզինքն կարծիք իմանալ, թե ինչպիսին են Լեւոն Արոնյանի շախմատի առաջիկայում կայանալից հավակնորդների մրցաշարում:

- Բոլորս հույսով եւ հավատով ենք սպասում այդ մրցաշարին: Կարծում եմ՝ Լեւոնի շախմատը շատ մեծ են: Այն, ինչի նա հասավ աշխարհի գավաթի խաղարկությունում, հերոսություն էր: Եվ թեթ այդպես շարունակի, կարծում եմ, աշխարհի չեմպիոնի տիտղոսը եւս կնվաճի:

- Ինչո՞վ է զբաղվում Սմբատ Լպուտյան գրոսմայստերն ու մարզիչը:

- Այժմ հիմնականում զբաղվում եմ շախմատի զարգացմամբ եւ մասսայականացմամբ, ինչն ահռելի աշխատանք է ժամանակ է պահանջում:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

ԵՐԿՐՈՒԿԱՆ ԱՐԾԱԹ ԵՎ ԲՐՈՒՆՉ

Քիթ-բոքսինգի «Գարեգին Նժդեհի» ակումբի սաները մասնակցեցին այս տարվա ամենակարեւոր մրցմանը՝ աշխարհի գավաթի խաղարկությունը, որ տեղի ունեցավ սեպտեմբերի 19-ից 25-ը Ռուսաստանի Դաշնության Անապա քաղաքում:

Ակումբը մրցավայր էր մեկնել հինգ մարզիկով, որոնցից չորսը բարձրացան պատվո պատվանդան. Վաչիկ Գյուլբուրդյանը (մինչեւ 28 կգ քաշային կարգ) եւ Էրիկ Մարտիրոսյանը (մինչեւ 37 կգ) արժանացան արծաթե մեդալի, իսկ Արայիկ Ավետիսյանը (մինչեւ 42 կգ) եւ Ռուբեն Սարգսյանը (մինչեւ 52 կգ) բարձրացան պատվո պատվանդանի երրորդ հարթակին՝ պարգևատրվելով բրոնզե մեդալով: Նոյ Անտոնյանը հաղթանակով սկսեց մրցաշարը, սակայն երկրորդ մենամարտում պարտություն կրեց եւ դուրս մնաց հետագա պայքարից:

Ակումբի մարզիչ, ՀՀ պատանավոր մարզիչ Արայիկ Սարգսյանի փոխանցմամբ՝ սաներն իրենց հնարավորություններից ցածր հանդես եկան, եւ դրանում բացասական դեր ունեցավ հոգեբանական գործոնը: Աշխարհի առաջնությանը մարզիկների ներկայացուցչական կազմ էր հավաքել, մասնակցում էին 20-ից ավելի երկրի քիթբռնցքամարտիկներ: Յուրաքանչյուր մարտ անցնում էր լարված ու անգիջում պայքարում: «Գնացել էինք ոսկե մեդալի հետևից, բայց ունեցանք այն, ինչ ունենք, անհրաժեշտ դասեր պիտի քաղենք այս առաջնությունից», - ասում է ակումբի մարզիչը:

Սեպտեմբերի 27-ին քիթ-բոքսինգի ազգային ֆեդերացիայի նախագահ Գառնիկ Հայրապետյանին, փոխնախագահ Արայիկ Սարգսյանին, աշխարհի առաջնությունում մեդալներ նվաճած մարզիկներին ընդունեց ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Հրաչյա Ռոստոմյանը, նրանց շնորհավորեց հաջող մրցելույթների համար: Նախարարը կարեւորել է քիթ-բոքսինգ մարզաձեւի հետագա զարգացումը՝ ասելով,



«Բոլորս պետք է գիտակցենք, որ խնդիրը ոչ միայն մարզական է, այլ նաեւ ունի ռազմավարական նշանակություն, քանի որ գործ ունենք մատաղ սերնդի առողջության, նրա հետագա ձևակառուցի հետ»:

«Գարեգին Նժդեհի» ակումբի սաներն այս օրերին արդյունավետորեն պարապում են. հոկտեմբերի 19-ից 24-ը խարկվում տեղի է ունենալու քիթ-բոքսինգի Ուկրաինայի բաց առաջնությունը, որին ավանդաբար մասնակցել են ակումբի սաները: Մարզիչն ու մարզիկները հույս ունեն, որ այս անգամ եւս կգտնվեն հովանավորներ, առանց նրանց օժանդակության հնարավոր չէ մասնակցել միջազգային մրցման:

Երբ նյութը պատրաստ էր տպագրության, տեղեկացանք, որ ՀՀ ոստիկանության ներքին գործերի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Լեւոն Երանոսյանի հրամանով Արա Սարգսյանը պարգևատրվել է «Ոստիկանության գործերում գերազանց ծառայության համար» 2-րդ աստիճանի կրծքանշանով:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Անվանի մարզիկի հիշատակին

2009 թվականից Կապանում անցկացվում են եվրոպայի առաջնության 3-րդ մրցանակակիր, ԱՊՀ երկրների սպարտակիադիայի չեմպիոն, համահայկական խաղերի կրկնակի չեմպիոն, հեռացատկորդ կապանցի Սերուժան Սարգսյանի հիշատակին նվիրված հանրապետական մրցումներ:

Հոկտեմբերի 7-ին Կապանի քաղաքային մարզադաշտում տեղի ունեցավ կապանցի անվանի մարզիկին նվիրված հուշամրցաշարը, որին մասնակցում էին Արցախի Հանրապետության եւ ՀՀ տարբեր քաղաքների (Երեւան, Գյումրի, Վանաձոր) պատանի աթլետները: Այն անցկացվում է Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի (ՀԱՕԿ) Սյունիքի մարզի ներկայացուցչության եւ աթլետիկայի ֆեդերացիայի հովանու ներքո:

Մինչ մրցումների սկսվելը՝ մարզիկներին, նրանց մարզիչներին եւ աթլետիկայի երկրպագուներին բարեմաղթանքի եւ շնորհավորանքի խոսքեր հղեցին Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի Սյունիքի ներկայացուցչության տնօրեն Արշավան Սարգսյանը եւ Արցախի աթլետիկայի ֆեդերացիայի նախագահ, Արցախի Հանրապետության Ազգային ժողովի «Ազատ հայրենիք» խմբակցության ղեկավար Արթուր

Թովմասյանը: Ա.Սարգսյանը հավուր պատշաճի ներկայացրեց Սերուժան Սարգսյանի անցած մարզական ուղին եւ պատանի աթլետներին հաղթական մեկնարկներ մաղթեց: Արթուր Թովմասյանն ասաց, որ իրենք Արցախից արեւ են բերել, որ բարենպաստ եղանակին պատանի աթլետները ցույց տան լավագույն արդյունքներ, որ ի հայտ գան նոր անուններ:

Մրցումների դրոշը բարձրացնելու պատիվը տրվեց ՀՀ հավաքականի անդամներ, 2017թ. ՀՀ չեմպիոններ, Արցախի թիմի անդամ Անգելինա Ավագյանին եւ աթլետիկայի եվրոպայի առաջնության մասնակից, կապանցի Արամայիս Սարգսյանին: 100-ից ավելի մարզիկներն իրենց ուժերը չափեցին չորս մարզաձեւից՝ 100 մետր, 800 մետր վազքատարածություններում, հեռացատկ եւ եռացատկ մրցաձեւերում: Մրցանակային տեղեր գրաված մարզիկները պարգևատրվեցին հուշանվերներով եւ հավաստագրերով, իսկ բոլոր մարզիկները, մարզիչները, պատվիրակության ղեկավարները ու հյուրերը խրախուսվեցին «Վարդ Վիժն» կազմակերպության Կապանի տարածքային զարգացման ծրագրի կողմից հատկացված հուշանվերներով:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Մեր Դավիթ Գասպարյանը

(գրականագետ, գրական քննադատ, գրականության պատմաբան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Գասպարյանը 70 տարեկան է)

էջ 1
Չամո Սահյանի կարծիքով «Եթե ասպարեզ են եկել Դավիթ Գասպարյանի նման քննադատներ, ապա քսպեները բան չունեն անելու: Ուրեմն ես՝ 37-ի կրկնվելու վտանգն էլ չկա...»:

Մեկ ուրիշ առիթով էլ ասում է՝ «Են օրը Դավիթի մասին խոսեցինք: Դավիթ Գասպարյանի. հրաշալիների մեջ է: Գնում է դեպի ճշմարտությունը՝ դեպի իր եւ իր ազգի բաց վերքերը: Մի խոսքով՝ նվիրյալ է...»:

Ըստ Գեորգ Էմինի՝ «Դավիթ Գասպարյանը մեր այսօրվա ամենից կրթոտ ու եռանդուն գրականագետներից մեկն է, բայց դա նրա միակ առաքինությունն ու առավելությունն է: Բանն այն է, որ մենք այսօր, ավելի քան երբեք, կարիք ունենք ոչ այնքան գրականագիտության, ինչքան քննադատության, իսկ քննադատությունը ոչ միայն անաչառություն, այլև մեծ քաջություն է պահանջում: Այդ խիզախներից մեկն էլ Դավիթ Գասպարյանն է»:

Վահե Օշականի համոզմամբ՝ «Դավիթ Գասպարյան մեր օրերու ամենեն հմուտ չարեցագետներն է եւ իր խոսքը կշիռ ունի մեր այժմու բանասիրության մեջ»:

Անշուշտ, դժվար է այդ ամենից հետո նոր խոսք ասել, մանավանդ որ նման գնահատումների թվարկումը կարելի է շարունակել: Բայց ես չի կարելի չասել, որ նրա մի շարք գրքեր հավերժորեն տեղ են գտել հայ գրականագիտության եւ գրաքննադատության գանձարանում՝ «Փակ դռների գաղտնիքը», «Զարեհի «Նորահայտ էջեր» հատորը, «Եղիշե Չարենց. Գայոց բանաստեղծության մայրաքաղաքը», «Ողբերգական Չարենցը», «Չարենցյան աստվածները», «20-րդ դար: Գրողներ» մատենաշարը... Նույն շարքին կարելի է դասել Ակսել Բակունցին, Գուրգեն Մահարուն, Պարույր Սեւակին, Չամո Սահյանին նվիրված մենագրությունները:

Չորեքյանն առիթ էր, որ մեկ անգամ էլ ընթերցեմք հատվածներ նրա հեղինակած գրքերից, հողվածներից, ուսումնասիրություններից: Եվ կրկին եկանք եզրակացության, որ Դավիթ Գասպարյանը հայ գրականության, մեր բարոյագիտության այսօրվա օրենսդիրներից է, մեր հոգեկոր հայրենիքի երեւելի բնակիչներից, մեր գրական-հասարա-

կական-մտավոր կյանքի շինարարներից ու նորոգողներից:

Նրա համար մերժելի են պատությունն ու սիրողականությունը: Նրա պատվախնդիր, նախանձախնդիր հայացքի գործնական բազում փակ էջեր բացվեցին, շատ ճշմարտություններ վեր հանվեցին, մեր հոգեկոր մեծերի շատ մտքեր վերծանվեցին ու նորովի իմաստավորվեցին:

Նա ստեղծեց արեւոտ մի երկիր, որի բնակիչներն են Եղիշե Չարենցը, Ակսել Բակունցը, Գուրգեն Մահարին, Պարույր Սեւակը, Չամո Սահյանը, Սերո Խանգոյանը... Եվ այդ երկիրն իրենը չէ միայն ու մեր օրերի համար չէ միայն, այլ գալիք ժամանակների համար է նաեւ, քանի որ նրա բնակիչները հայ ժողովրդի հավերժական ուղեկիցներն են:

Արդեն նշեցինք՝ գրականության ոլորտում Սյունյաց աշխարհի մեծերի կյանքի եւ գործունեության, ինչպես եւ ժամանակության ուսումնասիրումը, վերաբերվում են ու հանրայնացումը եղել է մնում են Դավիթ Գասպարյանի ուշադրության կենտրոնում:

Տեղին ենք համարում հիշել այն գրքերն ու ուսումնասիրությունները, որոնք առավել ուշագրավ են այդ առումով:

Նրա հեղինակությամբ լույս են տեսել՝ 1) «Փակ դռների գաղտնիքը: Չարենցը, Բակունցը եւ մյուսները» (Ե., «Ապոլոն», 1994թ.), 2) «Ակսել Բակունց, ժառանգություն» (Ե., Երեւանի պետական լայնախառն հրատարակչություն, 1999թ.), 3) «Չամո Սահյան: Կյանքը եւ ստեղծագործությունը» (Ե., «Ջանգալ-97», 2003թ.), 4) «Ակսել Բակունց: Կյանքը եւ ստեղծագործությունը» (Ե., «Ջանգալ-97», 2009թ.):

Նրա աշխատասիրությամբ լույս է տեսել «Ալեքսանդր (Ակսել) Ստեփանի Բակունց: Մեղադրական գործ N4131» ուշագրավ գիրքը (Ե., «Հրազդան» ՄՊԸ հրատ., 1999թ.):

Եղել են նաեւ առանձին ուսումնասիրություններ, որ լույս են տեսել հետեւյալ ժողովածուներում՝ 1) Չամո Սահյան (բուկլետ), Ե., 1984թ., (ռուսերեն), 2) Կյորեսի ասքը (առաջաբան). - Ա.Բակունց, Կյորես, Գորիս, 1998թ., 3) Ակսել Բակունց: Տարեգրություն. - Ա.Բակունց, Երկեր, Ե., «Նաիրի», 1999թ., 4) Լուսն գանգ է կյանքս (Չամո Սահյանի հետ). - Չամո Սահյան: Բանաստեղծը, մտա-

ծողը, մարդը, Ե., «Վան Արյան», 2001թ., 5) Դավիթ Գասպարյանի Չամո Սահյանը. - Չարություն Չովնաթան, Ծիածանվող հոգիներ, Ե., «Հայաստանի», 2012թ.:

Գեղինակային մատենաշարում նույնպես տեղ են գտել Եւ Ա.Բակունցը, Եւ Չ.Սահյանը՝ 1) Չամո Սահյան: Կյանքը եւ ստեղծագործությունը, Ե., 2003թ., 2) Ակսել Բակունց: Կյանքը եւ ստեղծագործությունը, Ե., 2009թ.:

Դավիթ Գասպարյան լրջմիտ ու ծանրակշիռ գիտնականի կարծիքը յուրօրինակ նշածող կամ կշռաբար է եղել բոլոր այն դեպքերում, երբ փորձել ենք գնահատել «Սյունյաց երկիր» թերթի գործունեությունը, երբ փորձել ենք ճշտել, թե որքանով ենք համաչափ քայլում մեր ժամանակի մարտահրավերներին:

Այդ առումով ուշագրավ են նրա մի քանի հողվածները, դիտարկումները:

2013 թվականին, երբ նշվում էր թերթի հոբելյանը, հեղինակեց մի հետաքրքիր հողված՝ «Տասնամյա լիություն»:

Դրանից՝ մեկ-երկու պարբերություն:

«Բացառիկ համարներն ինձ վրա տպավորվել են իրենց ընդգրկումով, մշակվածությամբ, բազմակողմանիությամբ եւ հանրագիտարանային սպառիչ ամբողջականությամբ», - գրում է Դավիթ Գասպարյանը:

Այնուհետեւ՝ ««Սյունյաց երկիր» թերթն այս ձեւով եւ տեսնում եմ որպես Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմության» շարունակությունը:

Թերթը լուսաբանում է մարզն ամբողջությամբ: Սկզբունքն է՝ լինել տեղում եւ ոչ թե հարցազրույցներ անցկացնել հեռախոսով եւ, առանց վերջնաստուգման, տպագրել...»:

Թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանի 60-ամյակի կապակցությամբ գրեց՝ ««Սյունյաց երկիր» մարզային թերթն այսօր դարձել է Սյունյաց աշխարհի դեմքը եւ կարող է իր հերթին եղանակ թելադրել ընդհանուր գրական-մշակութային ասպարեզում:

Էջ առ էջ այսօր դուք գրում եք Սյունիքի նոր ժամանակների պատմությունը, որը մի նոր եւ հավաստի սկզբնաղբյուր պետք է դառնա մայրաքաղաքի համար: Ինչքան ամբողջական՝ այնքան

լավ, ինչքան անկողմնակալ՝ այնքան վստահելի»:

Իհարկե, ասվածը սուկ գնահատանք ու քաջալերանք չէ: Ասվածն ավելի շատ պարտավորեցնող խոսք է, որին ձգտում ենք արժանի լինել այսուհետ եւս:

Դավիթ Գասպարյանը քանիցս հանդես է եկել «Սյունյաց երկիր» էջերում: Չգիտեմ՝ դրանք տե՞ղ են գտել իր կենսամատենագիտության մեջ, թե՞ ոչ: Բայց այսօր ներկայացնում ենք՝

1. «Սյունյաց երկիր», 3 փետրվարի 2007թ., N03,

Հարցազրույց համարին «Այո, Չարենցի մահվան առեղծվածը կա... բայց այս խնդրում պիտի լինեն պետական լուրջ մոտեցում եւ հարազատների կամքը»,

2. «Սյունյաց երկիր», 8 հունիսի 2009թ., N13,

Հարցազրույց համարին. «Շարունակելով ազգային ավանդույթները՝ Բակունցը ստեղծեց արձակի իր տեսակը՝ բակունցյան պատմվածքը»,

3. «Սյունյաց երկիր», 30 հունիսի 2009թ., N17,

Հարցազրույց օրվա թեմաներով. «Վերադառնանք ինքներս մեզ...»,

4. «Սյունյաց երկիր», 10 դեկտեմբերի 2009թ., N23,

Հարցազրույց համարին. «Արվյանը մեր հոգեկոր կյանքի հրապարակներից մեկն է, որտեղից ճյուղավորվում եւ սկիզբ են առնում շատ ճանապարհներ»,

5. «Սյունյաց երկիր», 26 մայիսի 2010թ., N10,

Գորիս քաղաքին նվիրված հատուկ համար, հողված «Գրական Գորիս»,

6. «Սյունյաց երկիր», 10 հունվարի 2013թ., N1,

«Գիրք մնացորդացի ճակատագիրը. հարցազրույց. «Ցավոք, ամեն մի ժամանակ ձգտում է Չարենցին հարմարեցնել իր պատկերացումներին»,

7. «Սյունյաց երկիր», 30 հոկտեմբերի 2013թ., N28,

Շնորհավորանք՝ «Տասնամյա լիություն»,

8. «Սյունյաց երկիր», 8 ապրիլի 2014թ., N6,

Չամո Սահյանի 100-ամյակին նվիրված հատուկ համար, Հարցազրույց. «Չամո Սահյանի տեղը Չովհաննես Թումանյանի կողքին է»,

9. «Սյունյաց երկիր», 15 ապրիլի 2015թ., N10,

Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին նվիրված համար,

Հարցազրույց. «Մեզ միավորում է ցեղասպանության հիշողությունը»,

10. Նույն համարում. հողված «Ցեղասպանության արտացոլումն անգլիագիր հայ գրողների երկերում»,

11. «Սյունյաց երկիր», 3 դեկտեմբերի 2015թ., N32,

Սերո Խանգոյանի 100-ամյակին նվիրված համար,

Հարցազրույց. «Սերո Խանգոյանը ժամանակի առջեւ»,

12. Նույն համարում հողված «Հայաստանի գրողների միությունը ստեղծումից մինչեւ վերաստեղծման փորձերը»,

13. «Սյունյաց երկիր», 27 հուլիսի 2016թ., N22,

Շնորհավորանքի խոսք Ս.Խաչատրյանի 60-ամյակի առիթով՝ «Թող Աստված բարին կատարի»,

14. «Սյունյաց երկիր», 6 սեպտեմբերի 2016թ., N27, «Անկախության 25-րդ տարեդարձին նվիրված համար»,

հողված՝ «Հայրենիք. բանք հայոց»,

15. «Սյունյաց երկիր», 6 փետրվարի 2016թ., N4, խոսք Սամվել Ալեքսանյանի 60-ամյակի կապակցությամբ:


Այդ հողվածներից, հարցազրույցներից յուրաքանչյուրը խոսակցության առանձին նյութ է:

«Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմի, պարբերականի ու նրա կայքէջի հազարավոր ընթերցողների անունից ջերմորեն շնորհավորում ենք հոբելյարին՝ Դավիթ Գասպարյանին:

Խոսքի վարկաբեկման ու էժանացման, միջակության հաղթահանման, մտավորի մերժման մեր օրերում եւ մեզանում առավել անհրաժեշտություն է Դավիթ Գասպարյան գիտնականի, գիմվոր գիտնականի, սահմանապահ գիտնականի տիրական ներկայությունը: Ուստի՝ նախնաառաջ առողջություն նրան եւ ստեղծագործական հաջողություններ:

Ծնունդը շնորհավոր, պատվական բարեկամ:

ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ



Չովհաննես Շիրյազ


Նոր գրականագետներից Շիրյազը շատ էր հավանում Դավիթ Գասպարյանին: Հաճախակի էր խոսում Դավիթի ինքնատիպ, տաղանդավոր, բնածին գրական հոտառության մասին: Օրինակ էր բերում ու հիշեցնում Սուրեն Աղաբաբյանի կարծիքը՝ ասված իր մոտ Դավիթի մասին, որ ինքը՝ Աղաբաբյանը, հանգիստ կարող է լինել, իրենից հետո կա, թողնում է Դավիթ Գասպարյանին:

Արարատ Լեռան քուրմը, Հուշապատում, Ե., 2002, էջ 71-73:

Չամո Սահյան

Եթե ասպարեզ են եկել Դավիթ Գասպարյանի նման քննադատներ, ապա քսպեները բան չունեն անելու: Ուրեմն ես՝ 37-ի կրկնվելու վտանգն էլ չկա: Մնում է Չարենցը իր ապագայի եւ իր հավատի հետ: Էդքան բան: Ամեն ինչ ասված է: Թող հասկանանք: «Սովետական Հայաստան», 1988, թիվ, 237, 20 սեպտեմբեր:

Կրականագետների՞ց: Ասեմ: Են օրը Դավիթի մասին խոսեցինք: Դավիթ Գասպարյանի. հրաշալիների մեջ է: Իմաստուն, ազնիվ տղա է: Գնում է դեպի ճշմարտությունը՝ դեպի իր եւ իր ազգի բաց վերքը: Էնտեղից է գալիս ու էնտեղ գնում: Մի խոսքով, նվիրյալ է: Իսկ նվիրյալը իրեն զոհել գիտի:



Մարզպետի անփառունակ պաշտոնավարման տարեկիցը

Ուղիղ մեկ տարի առաջ՝ 2016թ. հոկտեմբերի 6-ին, ՀՀ կառավարության որոշմամբ Սյունիքի մարզպետ նշանակվեց Վահե Հակոբյանը, ով մինչ այդ «Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի առաջին տեղակալն էր, ավելի վաղ՝ նույն ընկերության վարչական տնօրենը:

Նրան Սյունիքի հանրությանը ներկայացրին հոկտեմբերի 10-ին՝ նախ՝ Կապանի օդակայանում, ապա՝ մարզպետարանի դալիճում:

Օդակայանում նորանշանակին դիմավորեցին սյունեցուն բնորոշ անկեղծությամբ եւ ջերմությամբ, աղուհացով եւ ողջերթի մաղթանքներով:

Նույն ուղղաթիռով Կապան էին ժամանել ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանը, ՀՀ տարածքային կառավարման ու զարգացման նախարար Դավիթ Լոբյանը:

Նախարարները ելույթ ունեցան եւ օդակայանում, եւ մարզպետարանի դալիճում արտահայտելով մտքեր, որոնք մեկ տարվա հեռավորությունից ավելի շատ երագի տպավորություն են թողնում:

Դավիթ Հարությունյանը մշտեց, որ երկրի վարչապետ Կարեն Կարապետյանը մշակել է կառավարման նոր մոտեցումներ ու եղանակներ, որոնց շնորհիվ Սյունիքում հնարավորինս կարճ ժամանակամիջոցում ակնկալվում է շոշափելի արդյունքների գրանցում: Պատահական չէ, որ Սյունիքի մարզից է սկսվում փոփոխությունների մեկնարկը: Սյունիքն առաջինն է, որտեղ մարզի կառավարման նոր մոդել է նոր մոտեցում է ձեւավորվում:

Դավիթ Լոբյանն էլ համոզմունք հայտնեց, որ նորանշանակ մարզպետը Սյունիքում կկարողանա առաջընթաց ապահովել կյանքի բոլոր ոլորտներում: Սյունիքի մարզը հանրապետությունում համախառն ներքին արդյունքով առաջինն է, բայց աղքատության ցուցանիշներն ամենաբարձրերից է: Մարզն ունի զարգացման լայն հնարավորություններ, եւ ժամանակն է ներդրել այնպիսի ծրագրեր ու գաղափարներ, որոնք կնպաստեն աշխատատեղերի բացմանը, աղքատության ցուցանիշների նվազմանն ու բարեկեցիկ համայնքներ ունենալուն: Հատկապես Սիսիանի տարածաշրջանում գյուղատնտեսական աշխատատեղերի ստեղծումը կառավարության ուշադրության առանցքում կգտնվի, ինչի շնորհիվ հնարավոր կլինի ստեղծել արտադրական խմբեր եւ ապահովել համախառն ներքին արդյունքի աճ:

Նախարարները նաեւ հույս հայտնեցին, որ Սյունիքը շատ շուտով կլինի ընդօրինակման արժանի մարզ ամբողջ հանրապետությունում եւ նրա փորձը կլինի ուշադրության կենտրոնում:

Սի խոսքով՝ Վահե Հակոբյանին Սյունիքի մարզպետարան ուղարկեցին լավագույն, նույնիսկ անօրինակ հույսերով ու ակնկալիքներով: Շատ շուտով պարզվեց մինչդեռ, որ նորանշանակ մարզպետը գնում է բոլորովին այլ ճանապարհով՝ երկրամասը տանելով չտեսնված ու չսպասված փորձի ու փորձությունների ուղիով:

Անենագարմանակին ու տարա-



կուսելին դա չէր սակայն, այլ այն, որ նման փորձարկումների ու փորձությունների ժամին նրան օժտեցին անսահմանափակ, ավելի ճիշտ՝ հեքիաթային հնարավորություններով ու լիազորություններով:

Նախ՝ երկրի ղեկավարությունը նրան վերցրեց իր ամենագործունե մեթոդ եւ բոլոր հարցերում աջակցելու պատրաստակամություն հայտնեց, ինչի մասին պատեհ թե անպատեհ առիթով խոստովանում էր ինքը՝ մարզպետը:

Իշխանական եւ իշխանամերձ լրատվամիջոցները հրահանգ ստացան դրսևորել առավել լոյալ վարքագիծ Վահե Հակոբյանի գործողությունների հանդեպ, նրա մասին կամ լավը, կամ ոչինչ:

Երկրի գրեթե բոլոր գերատեսչությունները ձեռնպահ մնացին Վահե Հակոբյանի մասին գրված դիմում-զանգաստներին, նրա մասին եղած թերթային հրապարակումներին ընթացք տալուց:

Վահե Հակոբյանի տրամադրության տակ դրվեցին երկրի խոշորագույն հանքարդյունաբերական ձեռնարկության ֆինանսական հնարավորությունները: Նույնիսկ պետական պարզեւ շնորհից այդ ընկերության գլխավոր տնօրենին հարկերը մեկ տարում 29 մլրդ դրամով նվազեցնելու համար:

Վահե Հակոբյանի տրամադրության տակ դրվեցին մարզի դատախազությունը, ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը, իրավապահ մյուս մարմինները:

Նա հանրապետության միակ պաշտոնյան դարձավ, ում թույլատրեցին աշխատանքի հաճախել ուղղաթիռով: Ընդ որում՝ մեկ միակողմանի թռիչքը Երեւանից Կապան մոտ 800 հարյուր հազար դրամ արժե:

Նրան թույլ տրվեց գործնականում օգտվել ծառայողական երեք մեքենայից եւ ֆիկնագործի ծառայությունից, որին ակնհայտ էնք պարբերաբար:

Թույլ տրվեց կեղծել սեփական

կենսագրությունը եւ հնարավորինս առեղծվածային մնալ հայ հանրության համար:

Թույլ տրվեց Սյունիքում գտնվելու ժամանակ բնակվել Քաջարանի կոմբինատի պրոֆիլակտորիայի այն մասնաշենքում, որտեղ սովորաբար (տարածաշրջան այցելելիս) հանգրվանում են երկրի առաջին դեմքերը:

Թույլ տրվեց աշխատանքի հաճախել՝ երբ որ կամենում է եւ մեկ տարվա ընթացքում վեց անգամ մեկնել արձակուրդ:

Թույլ տրվեց սեփական ունեցվածքի վերաբերյալ օրենքով նախատեսված հայտարարագրերը կեղծել եւ խաբել պետությանը:

Թույլ տրվեց քարուքանդ անել մարզի առողջապահական եւ կրթական համակարգերը, կազմալուծել մարզպետարանի աշխատանքը, կազմաքանդել մարզպետարանի մի քանի վարչությունների եւ կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքն ու ստեղծություն սերմանել հայոց պետության ու երկրի ղեկավարության հանդեպ:

Թույլ տրվեց թափուր աշխատատեղերի համար եւ մարզպետարանում, եւ Քաջարանի կոմբինատում մարդիկ բերել Երեւանից՝ վճարելով բազմապատիկ անգամ բարձր աշխատավարձ, քան տեղացիներին:

Թույլ տրվեց եւ մարզպետարանում, եւ կոմբինատում ստեղծել գործակալների մեծ ցանց՝ գործընկերների մասին վարկաբեկող տեղեկություններ հավաքելու նպատակով:

Թույլ տրվեց սեփական հայեցողությամբ եւ ինչ-որ գրպանային հիմնադրամի միջոցով տնօրինել այն գումարները, որոնք Քաջարանի կոմբինատն ավանդաբար ուղղում էր տարածաշրջանի առաջնահերթ խնդիրների լուծմանը:

Թույլ տրվեց գործ տալ իրավապահներին եւ դրանով իսկ վախի մթնոլորտ ստեղծել ամբողջ մարզում, ընդ որում՝ գործ տալ եւ գործ սարքել բոլոր այն մարդկանց մա-

սին, ովքեր իրեն մարդատեղ չեն դնում:

Թույլ տրվեց մարզում աշխատատեղեր կրճատել, աղքատության միջը բարձրացնել եւ Քաջարանի կոմբինատի պատվերների մեծ մասը տեղափոխել Երեւան՝ խեղդելով մարզի ձեռնարկատերերից շատերին:

Թույլ տրվեց Կապանի տարածաշրջանը զրկել իշխանական կուսակցությունից Աժ-ում պատգամավոր ունենալու ռեալ հնարավորությունից (առաջին անգամ անկախության տարիներին):

Թույլ տրվեց ինկվիզիցիայի ժամանակներին բնորոշ լիտիությամբ ու ցինիզմով պատերազմ հայտարարել մարզային թերթին:

Թույլ տրվեց պառակտել մարզի հանրությունը, մարդկանց հանել միմյանց դեմ:

Թույլ տրվեց ծաղրուծանակի ենթարկել մարզի մտավորականներին եւ հերթով նրանց դուրս մղել սյունիքյան կյանքից՝ զրկելով ինքնադրսեւուման հնարավորությունից:

Թույլ տրվեց սյունեցիների հետ չփվելիս դրսևորել անզուսպ ցինիզմ, լկտի պահվածք, արհամարհանք, սպառնալից խոսելաճ:

Թույլ տրվեց ստել, էլի ստել, ամեն հարցում ստել, խոստումներ

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀԻՄՆԱԳՐՈՒԿՈՒՄ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՆԵՔՍԱՆՅԱՆ»

ՍԱՀՄԱՆՈՒԹՅԱՆ ՊՐԵՍԻՍԻՍԻՍԿՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝

ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:

Հեռ.՝ (0285) 5 25 63,

(091) 45 90 47,

(077) 45 90 47:

Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru

Էլ. կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակները չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր փճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

տալ ու չկատարել:

Պաշտոնի բերումով ամիսներ առաջ վերցնելով ՀՀԿ անդամատունս, իր գործունեությամբ լինելով Գարեգին Նժդեհի գաղափարների երդվյալ թշնամի, իրավունք ստացավ վարկաբեկել հանրապետական կուսակցության տեղական կառույցները՝ նրանց դեմ մարզում հասցնելով գրոյի, թեւ տարիներ շարունակ այդ կազմակերպությունները ՀՀԿ ամենակայացած ջոկատներն էին հանրապետությունում:

Նրան թույլ տրվեց...

Ահա այսպիսի Սյունիք ունենք Վահե Հակոբյանի պաշտոնավարման մեկ տարվա արդյունքում:

Այսպիսի «նվաճումներով» ենք նշանավորում նրա պաշտոնավարման մեկ տարին:

Մարզային կառավարման այսպիսի մոդելով ենք ամփոփում տարին...

Միջնադարյան այս մղձավանջի մեջ, այդուհանդերձ, կա եւ ուրախանալու, նույնիսկ հպարտանալու վիթխարի մի իրողություն. այդ ամենից հետո անգամ Վահե Հակոբյանը չկայացավ ու չինտեգրվեց Սյունիքին, իսկ մարզը մերժեց նրան՝ համարելով օտարական, անցանկալի անձ, սովորական ասպատակ ու վճառարար:

Նա եղավ Հայաստանի միակ մարզպետը, որ իր ղեկավարությանը հանձնված երկրամասում ամեն օր մնաց ահուղողի մեջ, ինչ-որ անակնկալների սպասելիս, ինչ-որ փրկօղակներ որոնելիս:

Անշուշտ, կարելի է եւ եզրակացություններ քաղել ներքին քաղաքականությունից, թե ովքեր են ինչի համար զորակից եղան նրան՝ մարզը փորձությունների ու փորձարկումների ճանապարհով տանելու անբարո գործում, թե ինչու նրա սանձը չքաշեցին, բայց դա այլեւս հետաքրքիր չէ, ինչպես որ անհետաքրքիր է, թե քանի օր կամ ամիս կտեւի քաղաքական այդ մեքենայի հուղարկավորումը: Այլ հարց կա՝ նրա հուղարկավորությունն օրեցօր ավելի է մոսմվում թուրքահամոններից մեկի մոսմիան քարայրում ամփոփելու ծիսակատարության, երբ ի պատիվ մոսմիայի անվերջ զոհողություններ են կատարվում, նաեւ՝ մարդկային զոհողություններ...

Թող ամենակարող Բարձրյալը պահպանեց լինի Սյունիքին եւ սյունեցուն:

ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

«ԳՈՎԱԶՂ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնու տպագրող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց Երկիր» պարտադիր է:

Ռ՝ ճանաչողական տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրմանը՝ 1530, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 20.10.2017թ.: